

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԺԷ. դարի կէսերին Կ. Պոլսում բնակուող հայերի մէջ դըպրոց հիմնադրելու եւ կրթութիւն տարածելու առաջին փորձերը, ըստ պատմաժամանակագրական փաստերի, կապւում է Կ. Պոլսում գործող Կղեմէս Գալանոս կոչուած հայագէտ քահանայի, իսկ աւելի ուշ Մխիթար Սեբաստացու անուան հետ:

1700 թուականին Կ. Պոլսում Մխիթար Սեբաստացին հիմնեց Մխիթարեան միաբանութիւնը՝ հոգեւոր-գիտական, մշակութային եւ ուսումնակրթական գործունէութիւն ծաւալելու նպատակով:

Սեբաստացին հայրենասէր էր, նուիրեալ եւ ազգասիրութիւնը ներդաշնաւորել էր կրօնական իր համոզմունքներին: Կրօնը նրա համար համոզմունք է, հաւատամք, ազգութիւնը՝ ցեղային պատկանելութիւն, որ արեան օրէնքով նոյնքան բարձր դադափարախօսութիւն է, որից դուրս դժուար թէ լինի մշակութային մեծ անհատականութիւն՝ «Ոչ կաթողիկէ կրօնս կը գոհեմ ազգիս սիրոյն եւ ոչ ալ ազգս՝ կրօնիս սիրոյն...», որովհետեւ, ինչպէս Լէոն է գրում. «Ազգի եւ կրօնի տարբերութիւնը կըրցած էր ըմբռնել մա, առաջինն ըլլալով հայերու մէջ»¹:

1712 թուականին Հռոմը պաշտօնանպէս ճանաչեց եւ վաւերացրեց Մխիթարեան միաբանութիւնը, իսկ նրա հիմնադրին՝ Մխիթար Սեբաստացուն, շնորհեց աբբահայր տիտղոսը:

1715 թուականին Թուրքիայի եւ Վենետիկի իշխանութիւնների միջեւ կտրուկ սրուեցին յարաբերութիւնները: Սեբաստա-

¹ ՅԵՐԷԱԹԵԱՆ Է. ԲԱՐՍԵՂ, Մխիթար մարդը, հայը, սուրբը, Վիեննա, 1976, էջ 114-115.

ցին, կանխատեսելով պատերազմի ելքը ի վնաս տեղական իշխանութիւնների, Վենետիկի հանրապետութիւնից հայցեց քաղաքացիական ապաստան: Վենետիկի աւագանու արտօնագրով 1717 թուականին Սեբաստացին թոյլատրութիւն ստացաւ տնօրինելու աւերուած Ս. Ղազար կղզին եւ ճիշտ է նկատուած, որ «Հայ համնարը սակայն իր քրտինքով, իր հոգիով պիտի թրծէր այդ հողը, զայն պիտի վերածէր հայ ամենէն սրբազան մէկ մասունքի եւ Ս. Ղազար պիտի ըլլար Հայաստանի չափ Հայաստան եւ անոր հողին պէս հայկական»²: Եւ այսպէս՝ Սուրբ Ղազարը, որ մինչ այդ բորոտների լքուած կղզի էր, 1717 թուականից սկսած դարձաւ միաբանութեան սեփականութիւնը: Այդ օրուանից «Սուրբ Ղազարը կը հայամայ, հոմանիշ դառնալով փոքրիկ Հայաստանի»³, հարստացնելով նրա դարաւոր մշակութային եւ հոգեւոր գանձերը, լեզուն, արուեստը՝ ներկայացնելով իբրեւ գիտութեան մեծ կաճառ աշխարհացրիւ հայութեան համար:

Սեբաստացին վարեց ոչ միայն միաբանութեան տնտեսական, վարչական եւ ուսումնակրթական աշխատանքները, այլեւ միաժամանակ հանդէս եկաւ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով: Նա զբաղուեց գիտամատենագիտական աշխատանքներով, հմտացաւ լեզուների իմացութեան մէջ՝ կատարելով բազմաթիւ թարգմանութիւններ, հրատարակելով շուրջ 30 մեծածաւալ աշխատութիւն, կանոնական, մեկնական բնոյթի բազմաթիւ գործեր, որոնց մէջ բացառիկ արժէք է ներկայացնում Աստուածաշունչը: Սեբաստացին վախճանուեց 1749 թուականի ապրիլի 27-ին, եւ նրա աճիւնը հանգչում է Սուրբ Ղազարի մայրավանքում:

Մխիթարեանները հայագիտական ու պատմագիտական գործերի հրատարակութիւններին զուգահեռ լոյս են ընծայել հայ, յոյն եւ հռոմէական մատենագիտական ուսումնասիրութիւններ՝ քաջ առ քաջ կեանքի կոչելով դարերով փոշեպատուած եւ մոռացութեան մատնուած հայ պատմամշակութային գանձերը (Եզնիկ, Կորիւն, Ագաթանգեղոս, Փաւստոս, Եղիշէ, Խորենացի, Փարպեցի, Դաւիթ Անյաղթ, Մանդակունի, Նարեկացի, Շնորհալի եւ շատ ուրիշներ):

² Նշ. աշխ., էջ 134-135.

³ Տե՛ս Սուրբ Ղազար, Վենետիկ, 1986.

«Մխիթարեանմ եղան առաջինը, որ ոչ միայն ճանչցան դպրոցի եւ դաստիարակութեան անհրաժեշտ հարկաւորութիւնը, այլեւ նախաձեռնարկողն եղան անոնց վերանորոգութեան»⁴։ Սեբաստացին 1732-ին Ս. Ղազարում հիմնեց դպրոց, որը սկզբում կրում էր վարժարան, իսկ աւելի ուշ՝ ճեմարան (ակադեմիա) անունը։ Դեռեւս նրա կենդանութեան օրօք Սուրբ Ղազարը դարձաւ հայ մշակոյթի կենտրոն, իսկ նրա մահից յետոյ «Ի պատիւ նորա Մխիթարեան կոչուած միաբանութեան մէջ չեն նուազիր այնպիսի աշակերտք եւ յաջորդք, որք իւրեանց բարունոյ շաւիղն ընթանալով՝ իբրեւ վարժապետք եւ մատենագիրք գործունեայ կը հանդիսանան թէ՛ ի Ս. Ղազար եւ թէ՛ վերջերն ի Վիեննա բացուած վանքի մէջ»⁵։

Ս. Ղազարի հայրերը Տրանսիլուանիայի Պաշպալով քաղաքում բացեցին նախակրթարան, որտեղ սովորում էին 30 հայագէի մանուկներ։ Նրանց թիւը յետագայում հասաւ 60-ի, 1749 թուականին՝ Յակոբ Կարնեցին, Անդրէաս եւ Յովհաննէս վարդապետները նախակրթարան բացեցին Վարատինում։ 1797-ին Հայր Ղ. Ինճիճեանը Տրանսիլուանիայի Սիբլիզում, որտեղ ապրում էր ընդամէնը 200-260 հայ, բացեց նոր դպրոց՝ 50-60 աշակերտով։ Տասնեօթ տարիների ընթացքում դպրոցը մեծ առաջնութեան աստիճանի վրայ բարձրացաւ։ Սակայն նրա գործունէութիւնը ընդհատուեց 1814 թուականին Ինճիճեանի անակնկալ մահուան պատճառով։ Մխիթարեանների եռանդուն ջանքերի շնորհիւ 1804 թուականին Կ. Պոլսում հիմնուեց նոր դպրոց, որի վերատեսուչը Հայր Պ. Թընկերեանն էր, կանոնադրութիւնը կազմեց Ագոնց աբբահայրը։ 1806 թուականին դպրոցը տեղափոխուեց Ս. Գէորգ վանքը, որտեղ սովորում էր 60 երեխայ, եւ կարճ ժամանակ էր պէտք, որ այն դասուէր Կ. Պոլսի առաջնակարգ դպրոցների շարքը։ 1810-ին դպրոցը տեղափոխուեց Կ. Պոլսի Բերա թաղամասը։ Վիճակագրական տուեալներով 1811-ին այդ դպրոցում արդէն սովորում էր 140 հայ

⁴ ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ., Երկհարիւրամեայ կրթական գործունէութիւն Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան, հատոր Ա (1746-1901), Վենետիկ, Ս. Ղազար, 1936, էջ 9։

⁵ «Արեւելեան մամուլ», յունիս, Զմիւռնիա, 1874, էջ 230-231։

մանուկ: Հայր Պողոսի մահից յետոյ նրա գործը մեծ պատասխանատուութեամբ շարունակեց Հայր Թովմաս Մաքսեթեանը⁶:

1808 թուականին Կ. Պոլսի Մխիթարեաններն իրենց ծախսերով բացեցին եւս երկու դպրոց, մէկը՝ Ղալաթիայում, միւսը՝ Բերայում՝ Հայր Ս. Սոմայեանի եւ Հայր Մ. Բժշկեանի տեսչութեամբ: Այս դպրոցներն իրենց որդեգրած կրթական առաջադիմական սկզբունքներով գործեցին Մխիթարեանների առաջադրած կանոնադրութեամբ, որ ենթադրում էր «արտաքին» ուսման, լեզուների իմացութեան, հոգեւոր կրթութեան բարձր մակարդակ, որն իրաւունք էր վերապահում շրջանաւարտներին կոչելու Ս. Ղազարի «օրինաւոր եւ արժանաւոր սաներ»:

Հարկ է նշել, որ Հայր Մինաս Բժշկեանը, յաղթահարելով մեծ դժուարութիւններ, կարողացաւ այս դպրոցը պահել՝ պահպանել մինչեւ 1817 թուականը: Եւ այսպէս՝ վերոյիշեալ դպրոցները, թէեւ ունեցել են կարճ կեանք, սակայն խոր արմատներ են գցել Պոլսի կրթական կեանքում:

1834 թուականին բացուեց Մուրադեան վարժարանը: Մխիթարեանները մշակեցին նոր, կատարեալ կանոնադրական եւ դպրոցավարութեան ծրագիր⁷:

Այս նոր ծրագիրն ունէր երկու կարեւոր ուղղութեան՝

ա) սաները խալէրէնից ու գաղղիերէնից բացի պարտադիր պէտք է տիրապետէին նաեւ եւրոպական այլ լեզուներ,

բ) պարտադիր էին նաեւ նկարչութիւն, վաճառականութիւն եւ ճարտարապետութիւն առարկաները:

Ինքնին հասկանալի է, որ Մխիթարեանների դպրոցներն այս դէպքում մերձենում էին բարձր աստիճան ապահովող վարժարաններին, որոնց մէջ առանձնանում էր յատկապէս 1840-ին Կ. Պոլսում բացուած Սկիւտարի ճեմարանը: Այստեղ դասաւանդւում էին պատմութիւն, ճարտասանութիւն, մեքենագիտութիւն, ընդհանուր գրականութիւն, պատմութիւն մատենագրաց, բժշկագիտութիւն, վաճառականութիւն եւ ճարտարապետութիւն, իտալերէն եւ այլ առարկաներ:

⁶ Հմմտ. ՍԱՐԳԻՍԵԱՆ Լ. ԲԱՐՍԵՂ ՎՐԴ., նշ. աշխ., էջ 43,

⁷ Նոյն տեղը, էջ 51,

Մխիթարեանների Ղալաթիայի վարժարանն ունէր 70-72 աշակերտ, գործում էր նաեւ գիշերօթիկ բաժինը:

Կ. Պոլսի Մխիթարեան դպրոցների շարքում իր առանձնաշատուկ տեղն ունէր Քաղկեդոնի Կեդրոնական վարժարանը, որը Հայր Ա. Ճարեանի տեսչութեան տասը տարիների ընթացքում (1878-1888թթ.) իր դրական հետքն է թողել պոլսահայ դպրոցի կեանքում: Վարժարանն ունէր 80-100 աշակերտ: Քաղկեդոնի դըպրոցն, իսկապէս, նոր երեւոյթ էր մայրաքաղաք Պոլսում:

1874-1875 թուականներին Կ. Պոլսի Բերա թաղամասում Հայր Քաջունու նախաձեռնութեամբ հիմնուեց նմանատիպ մի վարժարան՝ 100-120 աշակերտով, որտեղ դասաւանդումը, որքան էլ զարմանալի թուայ, տարւում էր մաթեմատիկական թեքումով, եւ որ այն «չափաւոր գիտութեամբ օժտուած աւարտավարժներ էր ընծայում ազգին»⁸:

ԺԹ. դարում (առաջին եւ երկրորդ կէսերին) Մխիթարեան միաբանութիւնը Կ. Պոլսում հիմնել է վեց նախակրթարան:

1830 թուականին Վիեննայի Մխիթարեանները Ֆրանցիսկեան վանքին կից հիմնեցին դպրոց, որը 1857թ. տեղափոխուեց Կ. Պոլիս՝ Բանկալթիի թաղամասը: 1909թ. այն վերակառուցուեց՝ գործելով գերմանական դպրոցների կրթական ծրագրերով: Մխիթարեանների ջանքերով հայկական դաղթօջախներում բացուել են աւելի քան 30 վարժարան: Սակայն բոլորը չէ, որ կարողացել են դիմակայել իրարայայտող տնտեսական ու քաղաքական փոթորկայոյ ժամանակներին:

Մխիթարեանների հիմնած վարժարաններից շատերը գործում են նաեւ այսօր, ինչպէս օրինակ՝ Կ. Պոլսում հիմնադրուած ԺԹ. դարասկզբին, Վենետիկում՝ 1836-ին, Հայէպում՝ 1936-ին, Բէյրութում՝ 1948-ին, Բուէնոս-Այրէսում՝ 1956-ին եւ այլն: Վենետիկն ունի երկու ընծայարան՝ Բէյրութում եւ Ս. Ղազար կղզում:

«Բարձրագոյն ուսմանց եւ գիտութիւններու» ծրագիրը մտել է այն հաստատութիւնների ցանկում, որոնց չըջնաւարտները կարող էին առանց քննութեան, ընդունուել այլ երկրների

համալսարանները: Հայկական ճեմարանը՝ դասաւանդուող գիտութիւնների ակադեմիական առարկայացանկով, կանոնադրական պահանջների իրականացումով եւ չափանիշներով հասցուել էր եւրոպական լսարանային բարձրագոյն կրթահամակարգի մակարդակին, որը եւ հիմք է ծառայել, որպէսզի թէ՛ Ֆրանսիական (1867թ.) եւ թէ՛ իտալական (1896թ.) կառավարութիւնների յատուկ հրամանագրերով այն ճանաչուէր լիկէոն: Սովորաբար լիկէոն ճանաչում ստացած ու արտօնագրուած ուսումնական հաստատութեան իրաւագործութիւն չէր տրոււմ այլազգի վարժարաններին, սակայն այդպիսի շնորհում տրուեց Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանին ոչ թէ Ֆրանս-իտալական կառավարութիւնների արեւելեան երկրների հանդէպ ունեցած մեղմաբարոյ քաղաքականութեան շնորհիւ, այլ վարժարանն ինքն էր ապահովել գիտական որոշակի բարձր մակարդակ եւ ներկայացրել այդպիսի յայտ, որի իրաւունքը վայելում էին այդ կրթօջախի գիտնական-մանկավարժները եւ բազմաշնորհ շրջանաւարտները:

Մուրադեան վարժարանը հիմնադրուել է Եւդոկիայի մեծահարուստ Սամուէլ Մուրադեանի կտակով: 1834 թուականի սեպտեմբերի 4-ին, իտալիայի Պադուա քաղաքում նորաբաց վարժարանի տեսչութիւնը (Հայր Խ. Փափագեան (ընդհանուր վերատեսչ), Հայր Պ. Մինասեան (ուսումնապետ), Հայր Ս. Սոմալեան (գործակալ), Հայր Մ. Մաղաքեան (խոստովանահայր)) առաջնորդուեց Մխիթարեանների կրթական համակարգին բնորոշ ուսումնամեթոդական ծրագրերով եւ ընդունած կանոնադրութեամբ:

Հարկ է նշել, որ վարժարանի գործունէութեան առաջին տարիները եղել են փորձութիւնների եւ նիւթական ու բարոյական զոհողութիւնների դժուարին շրջան, որի ընթացքում տեղի են ունեցել բազմաթիւ վերելք-վայրէջքներ, եւ դրանք յետագայում, ցաւօք, առիթ են ծառայել որոշ մեղադրանքների համար, ինչպէս՝ օրինակ, կրթական գործում հանդէս բերած դանդաղկոտութեան եւ անհետեւողականութեան մէջ, աւելին՝ գործել են առանց հաշուի առնելու ժամանակի գիտական ու կրթական պահանջները, եւ որ՝ «...Մխիթարեանները Թուրքիոյ մէջ գտնուող տիրացու վարժապետներէն աւելի դեռ քան մը ըրած չունին: Զկրցին ապացուցանել, թէ աւելի լաւ, աւելի մանկավարժական, աւելի նպատակայարմար ուղղութիւն մը կրնան տալ հաստա-

տած դպրոցներում»⁹։ Ինչ խօսք, նման գնահատականը իրատեսական չէ, գուրկ է գլխական հիմնաւորումից եւ արժէքից, եւ նկատուում է հեղինակի ծայրայեղ սուբյեկտիւիզմը։

Մինչդեռ «Հայրենիք» օրաթերթի նախորդ համարներից մէկում Հ. Տէր-Միրաքեանը, բնութագրելով Մխիթարեանների, եւ, մասնաւորապէս Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի գործունէութիւնը, գրում է. «Եթէ մի օր Մխիթարեան ժրջան միաբանութիւնը, որ միշտ նախանձնախնդիր է եղած ազգային լուսաւորութեանը, ձեռք գարնէր մեզ այսօր զբաղեցնող վարժարանի ժամանակակից պահանջներին համեմատ բարեփոխութեանը... պիտի հիմնէր մի այնպիսի կենտրոնական դպրոց... որ իւր բազմակողմանի առաւելութիւններով միակը լինելով՝ պիտի գլուխ բարձրացնէր մեր բոլոր ազգային ուսումնարանական հիմնարկութիւնների վրայ, եւ իրաւամբ կենտրոնականի դիրքն ստանալ»¹⁰։

1836 թուականին Մխիթարեանները նախատեսել էին բացել երկու դպրոց. Վենետիկում՝ Ռաֆայէլեան վարժարանը¹¹, Կ. Պոլսում՝ Մուրադ-Մխիթարեանը։

1836թ. սեպտեմբերի 11-ին մեծ հանդիսութեամբ բացուեց Ռաֆայէլեան վարժարանը (տեսուչ Հայր Ս. Թէոդորեան, ուսումնապետ՝ Հայր Ռ. Թրեանց, դաստիարակ՝ Հայր Ե. Մզրաքեան) Վենետիկի Բէզարոյի հոյակերտ ապարանքում։

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի Մուրադ-Մխիթարեան վարժարանին, ապա նրա նպատակը Պադուայի Մուրադեան եւ Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանների համար արժանաւոր սաներ պատրաստելն էր։

Մուրադեան եւ Ռաֆայէլեան վարժարանները շուտով իրենց ձեռք բերած հռչակով առաջ անցան Կ. Պոլսի բոլոր ազգային վարժարաններից։

⁹ «Հայրենիք», յուլիս, թիւ 878, Կ. Պոլիս, 1894.

¹⁰ «Հայրենիք», սեպտեմբեր, թիւ 44, 1891.

¹¹ Ռաֆայէլեան վարժարանը հիմնադրուել է հնդկահայ մեծահարուստ Էդուարդ Ռաֆայէլ Ղարամեանի կտակով։

Աւստրիական կառավարութիւնը ձգտում էր Մուրադեան վարժարանի տնօրինութիւնը վերցնել իր ձեռքը՝ ենթարկելով այն պետական վարժարանների համար սահմանուած ընդհանուր օրէնքներին: 1844 թուականին միաբանութիւնը վարժարանի անկախութիւնը եւ ինքնավարութիւնը փրկելու համար, գաղտնի բանակցութիւններ վարեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Գիզոյի հետ եւ, ստանալով Լուի Ֆիլիպի արտօնագիրը, այն տեղափոխեց Փարիզ: 1845-ին 50000 Փրանկով գնուեց Քոնտէի շքեղ ապարանքը, եւ անմիջապէս Տրապիզոնի եւ Իզմիրի Միլիթարեան վարժարաններից ախտեղ տեղափոխուեց 30-40 աշակերտ: Հայր Հ. Սօրղոմէանի եւ Հայր Ս. Եազըմեանի ջանքերով Փարիզում գործել սկսեց Մուրադեան վարժարանը: Նորաբաց վարժարանի ընդհանուր վերատեսուէ կարգուեց Հայր Ս. Թէոդորեանը, ուսումնապետ եւ դաստիարակ՝ Հայր Դ. Թնկրեանը:

Ֆրանս-պրուսական պատերազմի հետեւանքով 1870 թուականին Մուրադեան վարժարանը կրկին փոխադրուեց Իտալիա՝ միանալով Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանին՝ ստանալով Մուրադ-Ռաֆայէլեան անունը: Միլիթարեանների նախաձեռնութեամբ 1928-ին այն վերաբացուեց Փարիզում Սելրի-Պոմպադուրեան դղեակում եւ Ֆրանսիական կառավարութեան 1931 թուականի մայիսի 11-ի հրամանագրով դասուեց երկրորդական ու բարձրագոյն ազատ ուսումնարանների շարքը:

Հրատարակուած յայտագրերում կայ մի ընդհանուր ուղղութեամբ, որ բովանդակում է հետեւեալ սկզբունքները՝ «Վարժարանիս նպատակն է կրթել եւ դաստիարակել գաղութահայ մանկտին քրիստոնէական եւ առողջ սկզբունքներով. տալ անոնց արդիական ուսումներ՝ եւ մանաւանդ ապահովել տոհմային դաստիարակութիւնը: Մեր աշակերտները կը հրահանգուին Միլիթարեան դաստիարակ հայրերու եւ անճնուէր ուսուցիչներու առաջնորդութեամբ, ըլլալու համար ապագայ գիտակից հայ քաղաքացիներ՝ հոգեպէս վեհ, բարոյապէս առողջ, իմացականութեամբ բարձր եւ մարմնով կայտառ, յոյս իրենց ծնողներուն եւ պարծամք ազգիս»¹²:

¹² Յայտագիր Սելրի Սամուէլ Մուրատեան վարժարանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1938, էջ 6:

Հասկանալի է, որ վարժարանի կանոնադրութիւնը, ուսման բովանդակութիւնը, կրթական յայտագրերն ու ծրագրերը տարիների ընթացքում աստիճանաբար բարեփոխուել են եւ թարմացուել՝ ընդգրկելով կրթութեան բնագաւառում եղած նորն ու առաջաւորը:

Վարժարանի տարեգրութեան մէջ առանձնանում է ԺԹ. դարի 60-ական թուականները՝ Հայր Պ. Մինասեանի, Հայր Ղ. Ալիշանի, Հայր Օ. Գուրգէնեանի, Հայր Հ. Պապիկեանի տեսչութեան փուլը: Այսպէս՝ 1865-ին վարժարանը գիմնազիականից փոխադրուեց լիկէոնական բարձրագոյն աստիճանի:

Ուսման վեցամեայ տեւողութիւնը տարւում է երեք փուլով. առաջինում դասաւանդուել են կրօնք, քրիստոնէական վարդապետութիւն, քաղաքավարութեան կանոններ, սրբազան պատմութիւն, ազգային պատմութիւն, քաղաքական աշխարհագրութիւն, բնական աշխարհագրութիւն, հայերէն, իտալերէն եւ գաղղիերէնի քերականութեան առաջին մաս, տաճկերէն, թուաբանութիւն, գեղագրութիւն (հայերէն, տաճկերէն եւ գաղղիերէն), երաժշտութիւն ձայնական եւ մարմնամարզանք, երկրորդում՝ կրօնագիտութիւն, հայերէն, տաճկերէն, գաղղիերէն, իտալերէն եւ անգլերէն (հանդերձ ծանօթութեամբք անոնց մատենագրութիւնը), հին պատմութիւն, ճարտասանութիւն, աշխարհագրութիւն վաճառականական, գրահաշիւ եւ երկրաչափութիւն, տիեզերագիտութիւն, բնական պատմութիւն՝ առաջին երկու մասերը (բուսաբանութիւն եւ կենդանաբանութիւն), մեքենականութիւն, ուրուագրութիւն, գեղագրութիւն (հայերէն, տաճկերէն, գաղղիերէն), երաժշտութիւն ձայնական, մարմնամարզանք: Երրորդում՝ կրօնագիտութիւն, նոր եւ ժամանակակից պատմութիւն, հայերէն, գաղղիերէն, տաճկերէն եւ անգլերէն, գերմաներէն (ըստ նախասիրութեան), բնական պատմութիւն (հանքաբանութիւն եւ երկրաբանութիւն), բնագիտութիւն, բնալուծութիւն (օրգանական եւ անօրգանական), իմաստասիրութիւն, քաղաքական իրաւագիտութիւն (պատժական եւ վաճառականական), կրկնատումար եւ պարզատումար վաճառականութեան (հանդերձ ծանօթութեամբք փոխանակագրոց եւ ծովային իրաւանց), ուրուագրութիւն, դիմագծութիւն, ձայնական երաժշտութիւն, մարմնամարզանք, լատիներէն

եւ յունարէն (համալսարանական ուսմանց արժանի դատուողներուն համար)¹³:

Եւ եթէ բաւարարուենք միայն այս երեք փուլերում դասաւանդուող առարկաների ծրագրային ընդգրկումների ու գիտամեթոդական պահանջների համեմատական վերլուծութեամբ, առանց խորանալու մանկավարժական սկզբունքների կիրառման, տուած արդիւնքների, շրջանաւարտների եւ նրանց աւարտաճառների նկատելի ներդրումների մէջ, ինքնին հասկանալի է, որ Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանը, իրօք, կրթական լուրջ օջախ էր Եւրոպայի բուն սրտում՝ Փարիզում եւ Վենետիկում, եւ իր ուղղութեամբ եւ մակարդակով հաւասարում էր տուեալ երկրների գիմնազիաներին, սակայն ուսուցման իր բովանդակութեամբ տարբերում էր նրանցից ազգային պատմութեան, հայերէնի, տաճկերէնի եւ այլ առարկաների դասընթացներով:

Միխիթարեանների հասցէին եղել են նաեւ արդարացի քննադատութիւններ, յատկապէս այն մասին, որ նրանք առանձնապատուկ ուշադրութիւն չեն դարձրել վարդապետ-ուսուցիչների մանկավարժական պատրաստութեան վրայ: Դա կարելի է բացատրել երկու տեսանկիւնով, նախ՝ խոստալի եւ ֆինանսական աւելորդ ծախսերից, երկրորդ՝ բաւարարուել են միայն իրենց պատրաստած մանկավարժական կադրերով: Այդ առթիւ «Հայրենիք» օրաթերթը գրում է. «Միաբանութիւնը, թէեւ աշխարհական ուսուցիչներ կը գործածէ մեծ թուով իր հաստատութեանց մէջ, պէտք է սակայն որ իմքը մասնագէտ ըլլայ դպրոցական խնդիրներու մասին, քանի որ իրմէ կը բխի ուղղութիւնը, իր ձեռքով կը կատարուի վերին հսկողութիւնը, ուսումնապետութիւնը եւ այլն: Արդ կրնամք ըսել, որ հատ մը միաբան չի կայ որ սորված ըլլայ դասաւանդութեան արհեստը, հատ մը չի կայ որ մանկավարժ ըլլայ»,¹⁴ թէկուզեւ այս գործում անձնուրույններ, եւանդը կարեւոր գործօններ են, սակայն գլխաւորը մասնագիտական կրթութեան ապահովումն է: Միաբանութիւնը շատերին էր գործողում Եւրոպա (Հռոմ, Միլան, Գերմանիա, Ֆրանսիա եւ այլուր)՝ աստուածաբանութեան մէջ կատարելագոր-

¹³ Յայտարարութիւն Մուրադ-Ռաֆայել վարժարանի, որ ի վեներիկ, Վենետիկ, 1878, էջ 6-8:

¹⁴ «Հայրենիք», յուլիս, թիւ 878, Կ. Պոլիս, 1894:

ծուկեղև համար, կարելի էր եւ այդպիսի քայլ կատարել մանկավարժական կրթութիւն ստանալու ուղղութեամբ: Այս դէպքում իրենք բաւարարուել են իրենցով, այսինքն՝ սահմանափակուել են միաբանութեան մանկավարժական փոխանցուող գիտելիքներով ու փորձով:

Մուրադ-Ռաֆայէլեան գիմնազիոն-վարժարանում հիմնականում սովորում էին Մխիթարեան վարժարանների շրջանաւարտները: Առաջին շրջանի ուսման բովանդակութիւնը չէր տարբերւում Մխիթարեան վարժարաններից: Մխիթարեաններն ուշի-ուշով հետեւում էին եւրոպական դպրոցական ու կրթական շարժումներին, կրթական ծրագրերին ու դասագրքերին ներկայացուող պահանջների մէջ կատարուող սկզբունքային փոփոխութիւններին եւ քննադատաբար տեղայնացնելով փոխանցում իրենց վարժարանները: Ուսման բովանդակութեան մասնակի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ դասաւանդուող առարկաների ցանկում գերակշիռ մասը բնագիտամաթեմատիկական գիտութիւններն են: Կրթութեան բովանդակութեան մէջ աստիճանաբար խորացում էր բնական պատմութեան, տնտեսական աշխարհագրութեան, լեզուների ուսուցումը:

Երկրորդ շրջանում մեքենագիտութիւն առարկայի մուտքը նոր եւ առաջնութաց քայլ էր, որովհետեւ այն պահանջում էր տիրապետել տեխնիկայի վերջին նուաճումները, գտնել դասաւանդման համապատասխան ձեւեր ու մեթոդներ:

Ուսումնառութեան երրորդ շրջանում շարունակւում էր գիտելիքների խորացուած ուսուցումը: Համալսարան ընդունուողների համար կազմակերպւում էին յատուկ դասընթացներ՝ լատիներէին եւ յունարէնի գծով: Երրորդ շրջանը համալրուեց նոր առարկաներով՝ եռանկիւնաչափութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, օրգանական եւ անօրգանական քիմիա, իրաւագիտութիւն եւ դիմագծութիւն:

Կատարուած կրթական բարեփոխումների շնորհիւ վարժարանը ստացաւ լիցեյի աստիճան՝ ունենալով Ա., Բ. եւ Գ. տարիներ:

Ա. եւ Բ. տարիներին առաջին պլան են մղւում իմաստասիրական եւ բնագիտամաթեմատիկական գիտելիքների ձեռք բերումը, իսկ Գ. տարւում սովորողները՝ գործնական գիտելիքներ

ստանալու նպատակով, պարտաւոր էին անցնել Փարիզի տարբեր ուսումնական հաստատութիւնների, գործարանների, պետական ու վարչական մարմինների աշխատանքային բովով, որի ընթացքում կատարելագործուում եւ հմտանում էին ընտրած մասնագիտութեան մէջ:

Այսպիսով, կարելի է սիրով արձանագրել, որ թէեւ Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանն ունէր կրօնական ուղղութեամբ թիւն, բայց եւ այնպէս նրա բուն էութիւնը, ներքին բովանդակութիւնը, առարկաների բազմազանութիւնը, իրականում շատ հեռու էր միայն հոգեւոր դպրոց կոչուելուց, որովհետեւ անկախ իր որդեգրած առաքելութեանը, չէր կարող չարձագանքել եւրոպական գիտատեխնիկական մտքի առաջընթացին, նոր տնտեսական ու հասարակական յարաբերութիւնների զարգացմանը:

Այս երեւոյթը կրկին հաստատում է այն ճշմարտութիւնը, որ անկախ պատմական իրադարձութիւններից ու հանգամանքներից, վարժարանը միշտ հաւատարիմ է մնացել իր վեհ կոչմանը՝ առաջնորդուելով Սեբաստացու իմաստուն պատուիրանով. «Ո՛չ կաթողիկէ կրօնս կը գոհեմ ազգիս սիրոյն եւ ո՛չ ալ ազգս՝ կրօնքիս սիրոյն...»:

Վարժարանն ունէր չորս աստիճան՝ նախակրթարան, կրթարան (գիմնազիա), լսարան (լիցեյ) եւ համալսարան: Բերայի, Նիկոմիդիայի, Պարտիզակի, Տրապիզոնի եւ այլ գաւառների Մխիթարեան վարժարանները դասուեցին նախակրթարանների շարքը: Քաղկեդոնի վարժարանը համարուեց կրթարան, Մուրադ-Ռաֆայէլեանը՝ լսարանային:

Դպրոցական վկայականներ ստանալու համար պահանջուում էր կատարել պարտադիր առարկաների ծրագրերը. դրանք ֆրանսերէն, անգլերէն եւ իտալերէն լեզուներն էին, որոնք ապահովում էին բակալաւրի պետական քննութիւնների ծրագրային պահանջները:

Մխիթարեան հայրերը աւանդում էին հայագիտական առարկաներ՝ հայոց լեզու, ազգային պատմութիւն, հին եւ նոր մատենագիտութիւն, աշխարհագրութիւն, գրականութիւն եւ բարոյագիտութիւն:

Վարժարանում ուսումնական տարին սկսում էր հոկտեմբերին եւ աւարտւում յուլիսին: Այն բաժանւում էր եռամսեակների, ընդ որում՝ իւրաքանչիւր եռամսեակը փակւում էր քննութիւններով:

Թէկուզեւ, Վատիկանն իր գործակալների միջոցով աշալուրջ հետեւում եւ վերահսկում էր վարժարանի գործունէութիւնը, այսուամենայնիւ, Միխիթարեանները հետամուտ էին եւրոպական կրթօջախներում կատարուող տեղաշարժերին, կրթութեան բովանդակութեան մէջ կատարուող արմատական բարեփոխումներին, եւ վարժարանի դռները բացում էին միայն գիտութեան ու մշակոյթի նուիրեալների առջեւ: Դրան մեծապէս նպաստում էր եւրոպական լեզուների իմացութիւնը, այդպէս էլ «Բազմալեզու», որի էջերում ներկայացւում էին ժամանակի մեծ գիտնականների (Լինեյ, Քիւտլիէ, Բիւֆոն եւ ուրիշներ) գիտական աշխատութիւնները, հրապարակւում այնպիսի յօդուածներ, որոնք ընդգրկում էին նաեւ դպրոցի ու կրթութեան հարցերը:

Կրօնական աւարկանները հիմնական էին եւ աւանդւում էին ուսումնառութեան բոլոր տարիներին: Այսպէս, ուսումնական աւաջին շրջանում դասաւանդւում էր կրօնք, քրիստոնէական վարդապետութիւն եւ սրբազան պատմութիւն, միւս երկու շրջանում՝ կրօնագիտութիւն:

Բարոյական դաստիարակութիւնը վարժարանում իրականացւում էր կրօնականի հետ ձուլ միասնութեամբ: Վարժարանի յայտադրերից մէկը կանխադրում է, թէ «Բաղաճական խոհեմ եւ զգուշաւոր կրթութեամբ աշակերտք կը ստրվին հմազանդի միշտ բաղաճական եւ եկեղեցական օրինաւոր իշխանութեանց եւ ըլլալ բարեկիրթ եւ պատուաւոր բաղաճացի այն տերութեանց, որոնց հպատակ գտնուած են»¹⁵:

Բարոյական դաստիարակութեան բովանդակութեան առանցքը, այնուամենայնիւ, ազգասիրութիւնն էր, որին հասնելու համար կարեւոր դեր էին խաղում հայագիտական ու պատմագիտական աւարկանները, օտար միջավայրում մայրենի լեզուի պահպանումը: Այդպիսի պատասխանատուութեամբ ու մեծ սիրով Միխի-

¹⁵ Յայտարարութիւն Մուրադ-Ռաֆայէլ վարժարանի որ ի վեներիկ, Վենետիկ, 1878, էջ 5:

Թարեանները դասաւանդել են հայագիտական ու պատմագիտական առարկաները:

Ուշագրաւ է, որ Մխիթարեանները ոչ թէ թերագնահատում, այլ առաջարկում էին ուսումնասիրել աշխարհի ժողովուրդների պատմութիւնը՝ մատնանշելով նրանց բերած աւանդները մարդկութեան հոգեւոր հարստութեան գանձարանում, կարողանալ «... խոհական ըմտրողութեամբ հետեւիլ անոնց լաւ սովորութիւններուն եւ իրենց անձնական կատարելութեամբքն օտարաց ալ սիրելի եւ պատկառելի ընծայել իրենց ազգը, եւ ըմտանաց ու հայրենաց օգտակար ըլլալ»¹⁶:

Վարժարանում բարձր էր կարգապահութիւնը, եւ Մխիթարեան ուսուցիչները վայելում էին մեծ հեղինակութիւն: Նրանք գերազանցապէս գիտնականներ էին եւ յայտնի իրենց ուսումնասիրութիւններով, Թարգմանութիւններով, գիտական յօդուածներով, գրքերով, բառարաններով: Չկայ գիտութեան որեւէ բնագաւառ, որի ուսումնասիրութեան ուղղութեամբ Մխիթարեանները չունենան իրենց ներդրումը:

Հասկանալի է, որ սովորողը հէնց առաջին իսկ օրուանից պարտաւոր էր ընտրել իր կեանքի յետագայ գործունէութիւնը՝ հետեւելով իր ուսուցչին:

Ուսուցիչը բարձր հեղինակութիւն է՝ անկախ նրանից, թէ նա տասնեակ գիտական աշխատութիւնների հեղինակ է կամ այդպիսի ձիրքերից զուրկ սովորական վարժապետ:

Վարժարանում պատշաճ կարգ ու կանոն հաստատելը պայմանաւորուած էր ոչ միայն պատիժների խստութեամբ (ամենախիստ պատիժը վարժարանից հեռացնելն էր), այլեւ սովորողների ուսումնական ու աշխատանքային գործունէութեան ճիշտ կազմակերպմամբ, նրանց կողմից խնամքով կազմուած կանոնակարգով¹⁷:

Վարժարանում բարձր մակարդակի վրայ էր նաեւ Փիզիկական դաստիարակութեան դրուածքը: «Մարմնամարզանք» առար-

¹⁶ Նոյն տեղը, էջ 6:

¹⁷ Տե՛ս «Բարեկարգական կանոններ», յայտագիր Սեւրի Սամուէլ Մուրատեան վարժարանի, Վենետիկ, Ս.Ղազար, 1938, էջ 18-20:

կան ուսման բովանդակութեան մէջ դասուում էր պարտադիր առարկաների շարքը: Նոյնը կարելի է ասել վարժարանի լիցեյական շրջանի մասին:

Ֆիզիկական դաստիարակութիւնը տարուել է մարզական խաղերի, լողի, արշաւաների ձեւով:

Գեղադիտական դաստիարակութեան խնդիրները բարդ են ու բազմազան: Դրանք իրականացուում են գեղադիտական առարկաների ուսումնական դասընթացների միջոցով՝ նպատակ ունենալով սաների մէջ ամրապնդել սէր դէպի արուեստը, բնութիւնը, մարդը, նրանց մղել հասկանալու եւ գնահատելու գեղեցիկն ու բարին, վեհն ու հերոսականը, ողբերգականն ու կատակերգականը կեանքում եւ արուեստում: Գեղադիտական ընկալունակութիւնը մարդու ձեռքբերովի որակ է, որը պահանջում է որոշակի մշակոյթ եւ կրթութեամբ:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Մխիթարեանները հայադիտական, պատմադիտական, բնագիտամաթեմատիկական առարկաներին զուգահեռ, վարժարանում հաստատուն հիմքերի վրայ էին դրել գեղադիտական առարկաների դասաւանդման դրուածքը, որը ուսումնառութեան վեց տարիների ընթացքում իրականացուում էր երաժշտութիւն ձայնական, երգ եւրոպական, ուրուագրութիւն, գեղագրութիւն, դիմադժութիւն, վիմագրութիւն, մանրանկարչութիւն, քաղաքավարութեան կանոնք առարկաների միջոցով:

Մխիթարեան վարժարանները սկզբնական շրջանում ղեկավարում էին տեսուչները, որոնց նշանակում եւ երաշխաւորում էր միաբանութեան աբբահայրը:

1843-ին միաբանութիւնը ստեղծեց տաս հոգուց բաղկացած «Խնամակալաց ժողով»¹⁸, որին կանոնադրութեան համաձայն տրուեցին կառավարման լայն լիազօրութիւններ:

1846թ. «Խնամակալաց ժողովի» կառոյցներում կատարուեցին զգալի փոփոխութիւններ. ընտրուեց նոր «Խնամակալաց ժո-

¹⁸ «Խնամակալաց ժողովի» նախագահ ընտրուեց Ս. Թէոդորեանը, փոխնախագահ՝ Ռ. Թրեանցը, անդամներ՝ Ղ. Ալիշանը, Գ. Ալվազովսկին, Ն. Սարգսեանը, Պ. Մինասեանը:

ղով», որի նախագահ հռչակուեց աբբահայրը, նախկինում գործող «Հոգաբարձաց ժողովի» փոխարեն ստեղծուեց «Վարժարանների տեսչութիւն»։ Կանոնադրութեան համաձայն սահմանուեցին ուսումնական նոր կանոններ։

1868թ. Ս. Ղազարի երկու ուսումնարանների՝ Մուրադեան եւ Ռաֆայէլեան, նաեւ Բերայի եւ Քաղկեդոնի վարժարանների ուսումնական խնամատարութիւնը յանձնուեց «Խնամակալաց ժողովին», որի անդամները բաժանուեցին ներքին եւ արտաքին խմբերի¹⁹։ Ու թէեւ «Խնամակալաց ժողովը» գործունէութեան 25 տարիների ընթացքում կատարել էր հսկայածաւալ աշխատանք, սակայն վերջին շրջանում այն թուլացրել էր իր գործունէութիւնը եւ, բնականաբար, կորցրել իր երբեմնի հզօրութիւնը։

1885թ. Միաբանութեան կողմից վերստին կեանքի կոչուեց «Խնամակալաց ժողովը», դարձեալ ընդլայնուեցին նրա գործունէութեան շրջանակները։ «Խնամակալաց ժողովը» ընդհանուր ժողովին ներկայացրեց Մխիթարեան վարժարանների միասնական կրթական համակարգ ստեղծելու ծրագիր։

1894 թուականին ընդհանուր ժողովում ընդունուած դպրոցական համակարգի նոր նախագծի համաձայն Մխիթարեան վարժարանները պարտադիր կարգով պէտք է առաջնորդուեն կրթական միասնական ծրագրերով. սահմանուեց դպրոցի քառասուրճան համակարգ՝ նախակրթարան, կրթարան, լսարան համալսարան²⁰։

Այսպիսով Մխիթարեանների գիտական ու մշակութային գործունէութիւնը այնպիսի լայնածաւալ բնոյթ ունէր, մասնաւանդ նապոլէոն Բոնապարտի «Հայկական Ակադեմիա» շնորհումից յետոյ, որ եւրոպական տարբեր գիտական հաստատութիւնների եւ

¹⁹ Ներքին էին համարուում Վենետիկում բնակուող, արտաքին՝ նրա սահմաններից դուրս բնակուող Մխիթարեանները, որոնք մասնակցում էին միայն ընդհանուր ժողովներին։

²⁰ Այդ մասին հանգամանօրէն խօսւում է «Մխիթարեանց կրթական եւ ուսումնական ծրագիրը իրենց վարժարաններու մէջ» գլխում. Տէ՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., Երկհարիւրամեայ կրթական գործունէութիւն Վենետիկոյ, Մխիթարեան Միաբանութեան, հ. Ա., 1746-1901, Վենետիկ-Ս. Ղազար, 1936, էջ 180-186։

առանձին անհատներին՝ դէպի Արեւելքը եւ հնդեւրոպաբանութիւնը, արիական լեզուների ծագումը, գիտական համընդհանուր շարժումը շատերին մղեց դէպի Ս. Ղազար կղզին, դէպի Մխիթարեան միաբանութեան գիտական կենտրոնը: Դրանցից կարելի է յիշատակել Զորջ Բայրոնին, Զուգեպպէ Կապպլետտին, Ֆրիդրիխ Նոյմանին, Վիկտոր Լանգլուային, Ֆելիքս Նեւին, շեշտուած է նաեւ այն, որ Հայկական Ակադեմիայի անդամներ են եղել Հայնրիխ Պետերմանը, Հիւբըմանը, Էդուարդ Դիւրրիէն, Նիկողայոս Մաուր, Եօգէֆ Կարսը, Անտուան Մեյէն, Ֆրեդերիկ Ֆեյդին եւ այլք:

Ս. Ղազար կղզին՝ իբրեւ գիտական կենտրոն եւ Արեւելքի հնագոյն արժէքների պահպանման եզակի թանգարան, միշտ էլ արժանացել է Իտալիայի եւ Ֆրանսիայի կառավարութիւնների ուշադրութեանը, ամէնուրեք ազդարարուել է նրա բացառիկութիւնը եւ պետականօրէն ստացել արտօնագրեր, ակադեմիական յայտագրումներ, գնահատուել որպէս գիտութեան ու մշակոյթի միջազգային անուն ու հռչակ ստացած կաճառի:

Աշխարհահռչակ լեզուաբանների, հնագէտների, պատմաբանների, գրողների եւ արուեստագէտների Արեւելք-Արեւմուտք կապող մշակութային գիտական շղթայի դերն ու պարտականութիւններն իր վրայ էր վերցրել Վենետիկի Միաբանութիւնը՝ Ս. Ղազար կղզով, որ մի փոքրիկ Հայաստան է Եւրոպայի սրտում ունենալով իր իրաւական, կրթական, տնտեսական, կառավարչական ինքնավարութիւնը:

Հետեւապէս, երբ խօսւում է Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի մասին, այդ նշանակում է, որ այստեղ կամրջւում են հայ-իտալական-ֆրանսիական դարաւոր կապերն ու յարաբերութիւնները, քանզի Փարիզը, Հռոմը, Միլանը, Վենետիկը հայ ժողովրդի մտաւոր հանճարի պատկերացումներում ներկայացել են իբրեւ արուեստների, գիտութեան, երգի եւ երաժշտութեան մի խորհրդաւոր աշխարհ, եւ որի արգասաւոր արդիւնքը պիտի համարել գիտութեան, կրթութեան եւ արուեստի այն հանճարների առաքելութիւնը, որոնց նախանձախնդիրն են եղել Մխիթարեաններն՝ իրենց դպրոցներով ու շնորհաշատ սաներով հանդերձ. դրանք են Մ. Պէշիկթաշլեանը, Հ. Հիսարեանը, Մ. Մամուրեանը, Դ. Վարուժանը, Թ. Թէրզեանը, Վ. Սուսանեանը, Վ. Փափագեանը, Է. Շահինը, Գ. Ալեմշահը, Է. Մանասը, Ա. Էքեանը, Յովհ. Սա-

գըզեանը, Մ. Աղաբէկեանը, Հ. Մելգումեանցը (Մելքոն Խան) եւ շատ ուրիշներ:

Հայ-խտալական դարերի պատմութիւն ունեցող բարեկամական եւ մշակութային պատմութեան մէջ Մխիթարեանները, յենուելով Կիլիկեան Հայաստանի ռազմաքաղաքական եւ պետաիրաւական փոխադարձ յարաբերութիւնների բարի դրացիական ու բարեկամական կապերի հիմքի վրայ, անկախ հռոմադաւան եւ լուսաւորչական եկեղեցիների դաւանաբանական տարբերութիւնների, եղել ու մնում են որպէս գիտութեան ու մշակոյթի եւ դրանց հետ առնչուող օրէնսդրական բացառիկ օրինակ համաշխարհային պատմութեան մէջ: Այս դէպքում չի կարելի ասել, թէ Մխիթարեանները հայրենիք չունեն. Մխիթարեանների հայրենիքը Հայաստանն է, եւ նրանց գիտակցական միջավայրը՝ Վենետիկը, Միլանը, Հռոմը, Փարիզը, Վիեննան:

Մխիթարեանները բուն Եւրոպայում ներկայացրել ու ներկայացնում են ոչ միայն հայ ժողովրդի պատմութեան հնագոյն գանձերը, այլեւ Եւրոպային առաջադրել են ճանաչել մի հինաւուրց ժողովրդի գիտութիւնն ու մշակոյթը՝ հաշուի նստելով այն մեծ ներդրումների ու նուաճումների հետ, որի ռազմիրաները նաեւ իրենք էին՝ Մխիթարեան միաբանութեան քանքարաւոր ներկայացուցիչները:

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

The Mekhitarian Congregation, its spiritual and cultural values, academic-educational efficacy

(summary)

SHOGHIK VOSKANIAN, Ph.D.

The Congregation has excited and promoted its activity in two directions: religious and armenological – philological in virtue of the wise undertaking of Mekhitar Sebastatsi. From the very outset, the Mekhitarians owing to the well-educated and in any wise sages could make much success in administrative-organizational, educational, scientific, and translation directions. The first settler of these activities was Mekhitar Sebastatsi who had written and published through scientific researches and done perfect translations. In the second middle of the eighteenth century the Mekhitarian Congregation has already become famous for its unequaled and first class scientists and cultural figures such as G. Avetikyan, M. Chamchyan, M. Avgeryan, Gh. Indjidjyan, S. Somalyan, M. Jakhjakhian, E. Tovmadjyan And many others.

In the 1790s the Congregation was living its ascent period. It has carried out its independent armenological, historical-philological, geographical and lexicographic researches. Gradually the Mekhitarians were doing much to advance in fiction as well. Parallel to the edition of the armenological and translation books the Mekhitarians have published Armenian, Greek and Roman bibliographical researches. These publications brought the consigned oblivion of the Armenian historical-cultural life buried and dust covered treasures such as Yeznik, Koryun, Agathangelos, Pavstos, Yeghisheh, Khorenatsi, Parpetsi, Davit Anahagt, Mandakuni, Narekatsi, Shnorhali and many others.

The island of St. Ghazar is always entitled by the attention of the Italian and French governments; its uniqueness is proclaimed everywhere. It took out state patent, academic announcements and was valued as an academic-educational center that had won international scientific, cultural magnificence and eminence. Pursuing their goal with determination to catch up with the high standards of the European universities, the Mekhitarians attained their very purpose. In 1867 the French government and in 1896 the Italian government acknowledged officially Murad Rafayelian College as equivalent to their own colleges. Students graduating from that college could be admitted in any European university without passing their entrance exams. Consequently, while speaking about Murad Rafayelian College we are conscious of the Armenian-Italian-French centuries-old contact and relations, as Milan, Paris, Rome and Venice are considered as great value for the Armenian intelligentsia as a mysterious, pithy and enigmatic world of science, music and arts. The fruitful and productive result of this relationship must be reputed the mission of those geniuses of science, education and arts whose representatives are the Mekhitarians, with their gifted alumni such as M.Peshiktashlian, H. Hisarian, M. Mamurian, D.Varujan, T. Terzian, V. Svatchian, V. Papazian, E. Shahin, G. Alemshah, E. Manas, A. Eksheyian, H. Sagzian, H. Melgumians and many others. The responsibility and role of the cultural-scientific chain between the worldwide and renowned linguists, archeologists, historians, writers and artists of the East and West were undertaken by the Congregation of Venice in St. Ghazar. It can be regarded as a little Armenia in the heart of Europe having its educational, legal, economic and administrative self-government. In this case it cannot be said that the Mekhitarians had no mother country. Their cradle is Armenia and their awareness reach to Milan, Venice, Vienna and Paris.

The Mekhitarians have represented not only the ancient treasures of the Armenian history but also made the Europeans become acquainted with the science and culture of the Armenians reckoning with great contributions and achievements grateful to the endowments of the Mekhitarian Congregation.